Աշխատանքի ծածկագիր 3745

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ք.Երևան 19.01.2022թ.

Բողոքարկման հանձնաժողովը հետևյալ կազմով՝
նախագահությամբ՝ Ա.Մարգարյանի
մասնակցությամբ անդամներ՝
Լ.Աբգարյանի
Ա.Վարդանյանի

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) քննության առնելով քրեական մասնագիտացման դատավորների թեկնածուների ցուցակի արտահերթ համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Բողոքարկվել են տարբերակ 6-ի **քրեական իրավունքի բաժնի** 13-րդ և 27-րդ հարցերը:

Հարց 13

Վիճարկման արդյունքում գնահատականը թողնվել է անփոփոխ, առաջադրանքի թեստային պատասխաններից Հավակնորդը պետք է ընտրեր այն միակը, որն առավել համակողմանիորեն և սպառիչ կերպով բովանդակում էր խնդրի ճիշտ լուծումը: Ներկայացված խնդրում դա տարբերակ «գ»-ն է:

Հարց 27

Վիճարկման արդյունքում գնահատականը թողնվել է անփոփոխ, առաջադրանքի թեստային պատասխաններից Հավակնորդը պետք է ընտրեր միակ ճիշտը: Հավակնորդի ներկայացրած հիմնավորումն ընդունելի չէ, քանի որ հաշվի չի առնվել դիակն անարգանքի ենթարկելու հանցակազմի սուբյեկտիվ կողմի առանձնահատկությունները: Ներկայացված խնդրի փաստական տվյալները նման որակում տալու հնարավորություն չեն տալիս:

Բողոքարկվել են **քրեական դատավարություն բաժնի** 2-րդ, 14-րդ, 17-րդ, 32-րդ, 40-րդ հարցերը:

Հարց 2

Վիճարկման արդյունքում գնահատականը թողնվել է անփոփոխ, քանի որ Հավակնորդի հիմնավորումները հակասում են ՄԻԵԴ և ՀՀ վճռաբեկ դատարանի ձևավորած իրավական դիրքորոշմանը: Դատարանը պարտավոր էր ձեռնարկել անհրաժեշտ և հնարավոր բոլոր միջոցները վկայի ներկայությունը և հարցաքննությունը դատարանում ապահովելու ուղղությամբ և հրապարակել նախաքննական ցուցմունքը միայն չներկայանալու օբյեկտիվ պատճառների առկայության պարագայում, օրինակ՝ նրա վրա ամբաստանյալի անօրինական ներազդեցություն գործելու կամ սպառնալիքների վերաբերյալ փաստական տվյալների առկայության, մահվան դեպքում և այլն: Ավելին, խնդրի փաստական տվյալներից չի բխում, որ վկայի ցուցմունքը եղել է միակը կամ վճռորոշը, որի վրա հիմնվելով էլ՝ Հավակնորդը ներկայացրել է իր բողոքը:

Հարց 14

Վիճարկման արդյունքում գնահատականը բարձրացվում է 1 միավորով, քանի որ խնդիրը հստակ ձևակերպված չէ: Մասնավորապես, տուժողի մահվան վերաբերյալ հստակ տվյալի բացակայությունը «Գ»-ի արարքի ճշգրիտ որակման տեսանկյունով տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք է տալիս, որի պայմաններում ներկայացված տարբերակներից ընտրությունը հավակնորդի համար դարձել է խնդրահարույց:

Հարց 17

Վիճարկման արդյունքում գնահատականը թողնվել է անփոփոխ, առաջադրանքի թեստային պատասխաններից Հավակնորդը պետք է ընտրեր «գ» տարբերակը, որը առավել համակողմանիորեն և սպառիչ կերպով բովանդակում էր խնդրի ճիշտ լուծումը:

Հարց 32

Վիճարկման արդյունքում գնահատականը թողնվել է անփոփոխ, քանի որ Հավակնորդի պատասխանն ուղղակիորեն հակասում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածի 4.1 մասի կարգավորմանը:

Հարց 40

Վիճարկման արդյունքում գնահատականը թողնվել է անփոփոխ, առաջադրանքի թեստային պատասխաններից Հավակնորդը պետք է ընտրեր «գ» տարբերակը, որը առավել համակողմանիորեն և սպառիչ կերպով բովանդակում էր խնդրի ճիշտ լուծումը:

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ 3745 ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը մասնակիորեն բավարարել: Քրեական իրավունքի բաժնի ընդհանուր միավորը թողնել անփոփոխ, իսկ քրեական դատավարության բաժնի 14-րդ հարցի պատասխանը գնահատել 1 միավոր, ընդհանուր՝ 1 միավոր:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա.ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Լ.ԱԲԳԱՐՅԱՆ

Ա.ՎԱՐԴԱՆՅԱՆ